

ԱՐԿԵՍՏԻ ԵԶՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԱՄԻՏ ՄԿՐՅԱՆ
ԵՊԼԸ և ԵԳՊԱ դասախոս

Դարձվածքը կայուն բառակադակցության տարատեսակ է: Դա նշանակում է, որ ըստ ձևի, կառուցվածքի՝ այն վերլուծական բաղադրություն է, այսինքն՝ արտաքինադասն օժտված է անջատ գրելաձևով: Այն կարող է դարձվածակել երկու կամ ավելի բաղադրիչներ:

Ըստ իտալացի դարձվածաբան, ստուգաբան Ջուզեպպե Պիտտանոյի՝ դարձվածքը «*համառոտ համեմատություն է*», մինչդեռ Կ. Լադուչիի կարծիքով՝ այն «*լեզվի արտահայտչական բաղադրիչն է, որը կարող է փոխարինել մեկ բառույթի: Այն հաճախ դիմում է օրինակելի փաստերի, բնության իրողությունների, առակների, ասույթների կամ հայտնի իրավիճակների: Իբրև այդդիսին՝ դարձվածքը հարմարվում է համատեքստին*»²:

Ըստ հայերեն դարձվածաբանության ևս՝ «*դարձվածքը առաջին հերթին բառային նշանակությամբ օժտված լեզվական միավոր է, թեև այն տարանջատ ձևավորություն ունի*»³: Նիմենվելով Է. Ադայանի տեսական մոտեցման վրա, որի համաձայն՝ «*ըստ իմաստային առանձնահատկությունների և ըստ իրենց առաջացման գործընթացի՝ կայուն կադակցությունները՝ որդես վերլուծական բաղադրություններ, բաժանվում են երկու տեսակի՝ դարձվածային և բաղադրական*»⁴, ուշադրությունը բևեռենք նրա այն դրույթի վրա, որ «*դարձվածային կայուն բառակադակցություններն իրենց առաջացմամբ կադվում են խոսքի հետ, այսինքն՝ նախադրես եղել են տվորական շարահյուսական կադակցություններ և հետագայում, փոխաբերաբար գործածվելով, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակադակցության ու ստացել բառային իմաստ հենց այդ փոխաբերական նշանակությամբ՝ ձեռք բերելով բառին հատուկ անվանողական դեր: Ըստ այդմ՝ դարձվածային կայուն բառակադակցությունների բառային իմաստը նախադրես եղել է փոխաբերական իմաստ, որ հետո դարձել է տվյալ կայուն բառակադակցության բառային իմաստը*»⁵: Սակայն շարահյուսական ազատ կադակցությունը, դառնալով դարձվածային կայուն բառակադակցություն՝ փոխաբերական նշանակությամբ, իր ուղղակի նշանակությամբ ազատորեն կարող է դարձյալ գործածվել որդես վերլուծելի շարահյուսական կադակցություն: Այսպես, օրինակ՝ *costruire sull'arena* կարող է նշանակել. 1. *կառուցել ինչ-որ բան խաղատարեզում*, 2. *կատարել անօգուտ, ոչ երկարատև աշխատանք*: Առաջինը գործածվել է իր ուղիղ

իմաստով որդես ազատ շարահյուսական կառակցություն, մինչդեռ երկրորդը՝ փոխաբերաբար գործածված դարձվածային կայուն բառակառակցություն է:

Բաղադրական կայուն բառակառակցությունների՝ որդես վերլուծական բաղադրությունների իմաստը տվյալ կառակցության անդամների միասնությամբ ստեղծվող ուղղակի իմաստն է: Լեզվաբանի բնորոշմամբ՝ «դարձվածային կայուն բառակառակցությունների իմաստային հիմքը փոխաբերական նշանակությունն է, որ կառակցությունների ինքնուրույնությամբ դառնում է դարձվածային բառակառակցության հիմնական իմաստը: Բաղադրական կայուն բառակառակցությունները, ընդհանուր առմամբ, անվանական բառակառակցություններ են՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ, մինչդեռ դարձվածային կայուն բառակառակցությունները կարող են լինել և՛ անվանական, և՛ բայական, և՛ ածականական, և՛ կառական կառույցներ, ինչդեռ նաև՝ նույնիսկ ամբողջ նախադասություն»⁶:

Դարձվածաբանությունը՝ որդես լեզվաբանական գիտաճյուղ, ուսումնասիրում է կայուն բառակառակցությունների այն տարատեսակը, որը կոչվում է *դարձվածային միավոր* կամ *դարձվածք*: Այս գիտաճյուղի ի հայտ գալը կառավում է շվեյցարացի լեզվաբան, ծագումով ֆրանսիացի Շառլ Բալլիի անվան հետ: Դարձվածային միավորների առաջացման խնդիրը մինչ օրս գրավում է հետազոտողների ուշադրությունը: Դարձվածաբանական ստուգաբանության անհրաժեշտությունը դայմանավորված է դարձվածային միավորների իմաստային մթագնումով և, հետևաբար, թերմբոնումով: Դրանց ծագումը վերագրվում է դատմության տարբեր դարաշրջանների: Դարձվածային միավորները սովորաբար ունենում են ազգային, կենցաղային, կրոնական, սովորության, քաղաքական, դատական, տնտեսական, մշակութային և այլ հիմքեր, որոնք արտացոլվում են դրանց մեջ: Բացի այդ, դարձվածային միավորներում է ի հայտ գալիս տվյալ ազգի հիմքը, իսկ հիմքում ընկած են տվյալ ազգի ոգին և մտածելակերպը: Այս միավորները Ա. Նազարյանն իրավամբ համարում է «*ազգի հոգևոր արժեքների համադրությունը, որոնք վերակերտում են նրա անցյալի իրական տատկերը, բացահայտում նրա առանձնահատկությունները, ծանոթացնում նրա բարքերին, սովորություններին և ազգային հատկանիշներին*»⁷:

Ա. Նազարյանը լեզուների դարձվածային միավորները դասակարգում է երկու խմբով՝ ոչ տերմինաբանական և տերմինաբանական ծագման դարձվածային միավորներ: Մեր ուսումնասիրության առարկան սերտորեն կապվում է երկրորդի հետ՝ ներառելով արվեստի վերաբերյալ տերմինները: Ըստ այդմ՝ երկու լեզուների (հայերեն և իտալերեն) դարձվածաբանական բառադաշարի ուսումնասիրության նպատակով համադրվել են նախևառաջ բացատրական, դարձվածաբանական, ստուգաբանական, ծագումնաբանական բառարաններ:

րում տեղ գտած դարձվածային միավորները: Այդ միավորներում իբրև գլխավոր բաղադրիչ հանդես են գալիս ճարտարադեպության, նկարչության, քանդակագործության, խեցեգործության, վերականգնողական արվեստի բնագավառների եզրեր: Նետագոտենք դրանցից մի քանիսի իմաստը և ծագումնաբանությունը:

Այսպես, Ջուզեպպե Պիտտանոյի *Դարձվածաբանական բառարանում* տեղ գտած օրինակներից է՝ *Cicero pro domo suo*⁸ թևավոր խոսքը, որը վերցված է հենց իրենից՝ Ցիցերոնից. երբ աքսորելուց հետո այրում են նրա տունը, հրադարակավ ասում է. «*Ցիցերոնը իր նոր տան կառուցման գումարն է դաժանջում*»: Այս ասույթն այժմ հաճախ է գործածվում այն անձանց կողմից, ովքեր դատական ատյաններում իրենց իրավունքներն են դաշտդառնում:

*Cortina di ferro*⁹ արտահայտությունը վերաբերել է *բեռլինյան դատին*, և առհասարակ, գաղափարախոսական հատման գծին՝ Արևմուտքի և Արևելքի կոմունիստական երկրների միջև՝ սկսած հետդատերազմյան շրջանից մինչև բեռլինյան դատի փլուզումը: Այս արտահայտությունն առաջին անգամ գործածվել է Ուիմպերն Չերչիլի կողմից՝ 1946 թ. Ֆուլթոնում (ԱՄՆ) ունեցած իր ելույթներից մեկում: Դրա հայերեն հոմանիշն է *երկաթե վարագույր* դարձվածքը:

*Costruire una casa sulla sabbia*¹⁰, բառացի՝ *ավազի վրա տուն կառուցել*, որ փոխաբերաբար նշանակում է՝ *իզուր աշխատանք կատարել*: Այն առկա է նաև հայերեն դարձվածաբանական բառարանում՝ *օդային ամրոցներ կառուցել*: Գրեթե նույն իմաստն է արտահայտում *Fare castelli in aria*¹¹ դարձվածքը՝ բառացի՝ *օդում դղյակներ/ամրոցներ կառուցել*, ինչը նշանակում է կազմել ծրագրեր, որոնք իրատեսական չեն: Այն ծագել է հույն դրամատուրգ Արիստոֆանեսի *Ամդեր* կատակերգությունից, որտեղ հեղինակը Սոկրատեսի տարօրինակ, երևակայական փիլիսոփայության անմտությունը վերհանելու նպատակով փիլիսոփային զամբյուղով վեր է բարձրացնում, ուր իրականում միայն ամդերն են: Իտալերենում կա նաև *Իտալանիայում դղյակներ կառուցել* տարբերակը, որը դատմեցնում է ֆրանսերենից՝ *Faire des châteaux en Espagne*:

*Esser il pozzo di San Patrizio*¹², բառացի՝ *Ս. Պատրիկի ջրհորը լինել*, ինչը փոխաբերաբար նշանակում է՝ *անտակ, անվերջանալի լինել*: Այն գործածվում է նաև այն դեպքում, երբ ցանկանում են ինչ-որ մեկի ժառողջությունն ընդգծել: Ծագել է Իռլանդիայի Դերգ լճի փոքր կղզիներից մեկում գտնվող քավարան համարվող մի քարայրի անունից, որտեղ կյանքի վերջին տարիներն էր անցկացրել ճգնավոր Սուրբ Պատրիկը: Նայերեն համարժեքը կարող է լինել՝ *դանայան տակառ* կամ խոսակցական լեզվում տարածված՝ *անտակ հոր* դարձվածքը:

*Essere sul viale del tramonto*¹³, բառացի՝ *մայրամուտի դողոտայի վրա լինել*, որ

նշանակում է *աշխատանքային գործունեության ավարտին մոտ* լինել: Այն վերցված է Բիլլի Ուայլդերի «*Մայրամուտի դողոտ*» ֆիլմից (1950 թ.):

*Essere in area di parcheggio*¹⁴, կայանատեղու տարածքում լինել, դարձվածքը ծագել է վերջերս և կապված է երիտասարդների վերջին ժամանակների գործազրկության երևույթի հետ: Նշանակում է՝ սղասել, սղասողական վիճակում լինել, հուսալ, ինչդեպ դա լինում է ժամանակավոր կայանատեղիներում:

*Facile è criticare, difficile è l'arte*¹⁵՝ բառացի՝ *քննադատելը հեշտ է, դժվարը՝ արվեստն է*, փոխառություն է ֆրանսերենից՝ *La critique est aisée, et l'art est difficile*, թարգմանաբար՝ *Քննադատությունը հեշտ է, արվեստն է դժվար*: Վերաբերում է այն մարդկանց, ովքեր քննադատում են ուրիշներին, երբ իրենք էլ հմուտ չեն արվեստում կամ չեն ստեղծագործում: Այն վերցված է Ֆիլիպ Ներիկո Ղեւոնդի (1680-1754) *Le Glorieux* (*Փառադանձը*) կատակերգությունից:

*A ciascuno il suo (mestiere)*¹⁶՝ բառացի՝ *յուրաքանչյուրին՝ իրենը* (արհեստը), իր վարդեստությունը, ինչը նշանակում է՝ *յուրաքանչյուրը թող իր գործով զբաղվի*: Ղիմքում Ղոռմեական օրենսգրքի գլխավոր նախադասություններից մեկն է՝ «*Արդարադատության կամքն է յուրաքանչյուրին տալ իր իրավունքը*»: Ի դեպ, առավել տարածված է վերջինիս կրճատ տարբերակը՝ *a ciascuno il suo*:

Fare il mestiere (կամ *l'arte*) *di Michelaccio*¹⁷՝ բառացի՝ *Միքելաջոյի արհեստը/կամ արվեստը կատարել*, ինչը *Թոմասեո իտալերեն լեզվի բառարանում* բացատրվում է որդես ուտել, խմել և զբոսնել սիրող մարդկանց արհեստ, զբաղմունք:

*Fare un contraltare*¹⁸, բառացի՝ *հակախորան կառուցել* (կրոնական բառադաշարում այն նշանակում է գլխավոր խորանի դիմաց մեկ այլ խորան կառուցել), մինչդեռ փոխաբերական իմաստով նշանակում է *հիմնել հաստատություն, որով հնարավոր լինի մրցակցելով արժեզրկել գոյություն ունեցող մյուս հաստատությունները*: Առաջին անգամ այն նշվում է Գուիդո Պիովենեի կողմից, *Ճանադարհորդություն դեռի Իտալիա* ստեղծագործության մեջ (1957 թ.):

*Non avere né arte né parte*¹⁹՝ արտահայտությունը նշանակում է *ոչ մի արհեստ չունենալ, ոչինչ անել չիմանալ, անընդունակ լինել անել ինչ-որ բան*: Նայերենում համարժեքը կարող է լինել *չենք ու շնորհքից զուրկ մարդ լինել* արտահայտությունը: Այն առաջին անգամ գործածվել է XIX դարի իտալացի բանաստեղծ և արձակագիր Ջ. Կարդուչիի *Ստեղծագործություններ* ընդհանուր խորագրով ժողովածուում:

*Pietra (o colonna) miliare*²⁰, բառացի՝ մղոնաքար կամ սյուն, ունի վճռորոշ տառեր, կետի իմաստը: Ըստ Ջ.Պիտտանոյի նշված բառարանի՝ ժամանակին այսպես էին կոչվում այն ցածր սյուները, որոնց վրա նշված էր հեռավորությունը Նին Նոմից: Դրանց վրա նշված էին լինում M.P. տառերը, որոնք *mille passum*՝ հազար քայլ (որը հավասար է 1478.70 մետրի) նշանակող բառակապակցության առաջին տառերով նշվող հատվածում էին: Դրանք կանգնեցվում էին կայսրերի կողմից: Առաջին մղոնի սյունը կառուցել է Օգոստոս կայսրը, և այն կոչվել է *milliarum aureum*՝ ոսկե մղոնասյուն, քանի որ իրականում ոսկեգօծ է եղել:

*Piantare baracca e burattini*²¹ բառացի՝ լքել հյուղակը և տիկնիկներին, ինչն ըստ Պանցինիի ժամանակակից բառարանի՝ նշանակում է ի հեծուկս ինչ-որ բանի՝ անադատելի կերպով թողնել, հեռանալ: Պատկերը վերցված է տիկնիկային թատրոնի աշխարհից, երբ աղաշնորհ դերասանը, հուսահատված հանդիսատեսի սուլոցներից, փակում է վարագույրը և հեռանում:

*Sordo come una campana*²², բառացի՝ խուլ, ինչդեպ զանգակատան զանգը, սակայն հավանաբար այս տարբերակում տեղի է ունեցել ժողովրդական ստուգաբանության աղավաղման երևույթ՝ այդպիսով գործածվելով *campanaro*՝ եկեղեցու զանգակատան ժամկոչի՝ զանգը հնչեցնող անձի փոխարեն: Իտալերենում վերջին համեմատություն-դարձվածքի հետ մեկտեղ առկա է նաև այլ հոմանիշային տարբերակ, որը լատինական է ֆրանսերենի *sourd comme un pot*՝ խուլ, ինչդեպ (կավե) սափորը դարձվածքից, այն է՝ *sordo come un vaso di terracotta*՝ խուլ ինչդեպ կավե սափորը: Բացառված չէ այն վարկածը, ըստ որի *campana* բառն ուշ շրջանի լատիներենի *vasa campana*՝ Կամդանիա շրջանին բնորոշ բրոնզե սափոր արտահայտության կրճատ տարբերակն է:

*La tela di Penelope*²³, բառացի՝ Պենելոպեի դատանքը, ինչը նշանակում է՝ աշխատանքը ավարտին չհասցնել, անել, հետո քանդել, նորից սկսել և այդպես անվերջ: Այն վերցված է դիցաբանությունից: Նոմերոսի Ողիսականում Ողիսուսի երկարատև բացակայության ժամանակ նրա կինը՝ Պենելոպեն, որի ձեռքը խնդրող բազում իշխաններ կային, որդեսգի մերժեր նրանց ամուսնության առաջարկները, ասել էր, որ ընտրություն կանի այն ժամանակ, երբ կավարտի սկեսրայրի համար հյուսող դատանքը: Սակայն նա գիշերը քանդում էր ցերեկվա ավարտած աշխատանքը և այդպես ժամանակ շահում՝ սիրելի ամուսնու վերադարձին սողանելով:

*Vedere la pagliuzza nell'occhio altrui e non vedere la trave nel proprio*²⁴, բառացի՝ իր աչքի գերանը չտեսնել՝ ուրիշի աչքի շյուղը նկատել կամ տեսնել ար-

տահայտությունը, որ առկա է նաև Սուքիասյանի և Գալստյանի *Նայոց լեզվի դարձվածաբանական բառարանում*: Նշանակում է՝ *նշմարել ուրիշի թերությունները՝ անտեսելով սեփականները*: Ծագել է Մատթեոսի Ավետարանից, որտեղ նաև ասվում է. «Մի՛ դատադարտեք, որդեսգի չդատադարտվեք»:

*Voi sonerete le vostre trombe e noi soneremo le nostre campane*²⁵, բառացի՝ *դուք կնվագեք ձեր շեփորները, մենք կհնչեցնենք մեր զանգակատան զանգը*, թևավոր խոսքը վերցված է ղափառական իրադարձությունից, երբ Ֆրանսիայի թագավոր Կարլոս VIII-ը 30.000-անոց զորքով մտավ Իտալիա՝ Նեապոլը գավթելու նպատակով, քանի որ իրեն համարում էր Անժուների օրինական իրավահաջորդը: Եվ ահա նրանց, ովքեր փորձ էին անում հակադրվել իր ռազմական գործողություններին, նա այդպես էր ղափառասխանում, ինչը նշանակում էր, որ ընդդիմանալը որևէ արժեք չունի իր համար, քանի որ, միևնույն է, իր նպատակին հասնելու է:

*Combattere contro i mulini di vento*²⁶՝ *հողմադաշների դեմ կռվել* արտահայտությունը տարածվել և այլ լեզուներ է ներթափանցել իսպանացի գրող Միգել դե Սերվանտես Սաավեդրայի հայտնի *Դոն Զիշոտ* վեպից (1605-1615) և առկա է նաև հայերեն դարձվածաշերտում: Նշանակում է՝ *իզուր ջանքեր գործադրել, անիմաստ թայքարել ինչ-որ բանի դեմ*:

Նայերենի դարձվածային միավորներից Ս. Գալստյանի և Ա. Սուքիասյանի բառարանում տեղ է գտել *ավգյան ախոռ/գոմ*²⁷ դարձվածքը, որի բացատրությունը հեղինակները տալիս են հետևյալ կերպ. «*խիստ կեղտոտված, թափթփված շինություն, ինչպես նաև ծայրահեղ անկարգ վիճակում գտնվող գործեր (ըստ հունական դիցաբանության՝ Ավգիաս թագավորի ախոռները, որ չէին մաքրվել 30 տարում, Ներկուլեսը (Ներակլը) մաքրում է մեկ օրում՝ այնտեղ ուղղելով գետի ամբողջ ջուրը)*»: Նույն թեմայի հետ է կապված մյուս դարձվածքը՝ *ավգյան ախոռները կամ գոմերը մաքրել*՝ երկար ժամանակվա կեղտոտություններից մաքրել, անկարգությունից ազատել, երկար ժամանակվա անարդարությունը կարճ ժամանակում վերացնել, խիստ անկարգ գործերը շտկել:

Նայոց լեզվի դարձվածաբանական բառարանում առկա է նաև *Բաբելոնի կամ բաբելոնյան աշտարակ* դարձվածքը: Նամաձայն հայ հեղինակների սահմանման՝ ըստ Նին Կտակարանի՝ աստծուն հասնելու նպատակով հին Բաբելոնում կառուցված աշտարակն է: Նույն բառարանում տեղ է գտել նաև մեկ այլ դարձվածք՝ «*Բաբելոնի կամ բաբելոնյան աշտարակաշինություն կամ խառնակություն (խառնաշփոթություն)*»²⁸ - 1. *Լեզուների խառնակություն* (ըստ Նին Կտա-

կարանի ավանդության՝ տեղի ունեցավ Բաբելոնի աշտարակի կործանումից հետո): Փոխաբերական իմաստով այն մեկնաբանված է որդես *անբարեխիղճ վիճակ, անկարգություն, ինչդես նաև՝ աղմուկ-աղաղակ՝ ժխոր*:

Օղային ամրոցներ կառուցել (գրք.)²⁹ դարձվածքը հայ դարձվածաբանները մեկնաբանում են հետևյալ կերպ՝ «*ցնորական, անիրագործելի ծրագրերով տարվել*»: Այն վերագրվում է քրիստոնեական եկեղեցու նշանավոր գործիչ Սբ. Ավգուստինոսին (354-430):

Նետաքրքրական է նաև իտալական իրականությանը վերաբերող *հավերժական քաղաք*³⁰ դարձվածքը, որն ակնարկ է Նոմի մասին և վերցված է հռոմեացի բանաստեղծ Տիբուլլուսի էպիգրամների երկրորդ գրքի 5-րդ էպիգրաից:

Այսպիսով, ծագումնաբանորեն հետազոտված իտալերեն 22 դարձվածքների աղյուսակային տատկերը ակներև է դարձնում այն փաստը, որ դրանցից 19-ը բնորոշ են միայն իտալերենի դարձվածաշերտին, մինչդեռ 4-ն ունեն իրենց համարժեքները հայերենի դարձվածաշերտում:

- 1 Pittàno G., *Dizionario dei modi di dire*, Zanichelli editore, Bologna, 2009, p. 3.
- 2 Lapucci C., *Dizionario dei proverbi italiani*, Le Monnier, Firenze, 2006, p.VIII.
- 3 Ջահուկյան Գ. Բ., Սղայան Է. Բ., Սոաբեյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., *Հայոց լեզու*, I մաս, II դրակ, «Լույս» հրատ., Եր., 1980, էջք 472-512 :
- 4 Սղայան Է., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, ԵՊՀ հրատ., Եր., 1984, էջ 236:
- 5 Նույն տեղում, էջ 237:
- 6 Նույն տեղում, էջ 237:
- 7 Назарян А. Г., *Фразеология современного французского языка*, «Высшая Школа», М., 1987, стр. 261.
- 8 Pittàno G., *Dizionario dei modi di dire*, p 68.
- 9 Նույն տեղում, p 74.
- 10 Նույն տեղում, p 75.
- 11 Նույն տեղում, p 136.
- 12 Նույն տեղում, p 99.
- 13 Նույն տեղում, p 108.
- 14 Նույն տեղում, p 100.
- 15 Նույն տեղում, p 134.
- 16 Նույն տեղում, p 10.
- 17 Նույն տեղում, p 143.
- 18 Նույն տեղում, p 152.
- 19 Նույն տեղում, p 201.
- 20 Նույն տեղում, p 232.
- 21 Նույն տեղում, p 231.
- 22 Նույն տեղում, p 260.
- 23 Նույն տեղում, p 268.
- 24 Նույն տեղում, p 289.
- 25 Նույն տեղում, p 294.
- 26 Carollo S., *La vera storia di 400 frasi celebri e modi di dire*, Giunti Demetra, Firenze, 2008, p. 236.
- 27 Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, ԵՊՀ հրատ., Եր., 1975, էջ 98:
- 28 Նույն տեղում, էջ 98:
- 29 Նույն տեղում, էջ 606:
- 30 Նույն տեղում, էջ 349:

THE MAIN WAYS OF THE FORMATION OF THE PHRASEOLOGICAL UNITS CONTAINING AN ART TERM IN ITALIAN AND ARMENIAN

ANAHIT MKRYAN

Lecturer at YSULS and YSAFA

The paper touches upon the main means and ways of forming phraseological units containing an art term based on particular vocabulary in Italian and Armenian. The author studies the origin of the above mentioned phraseological units, has done thematic classification revealing most frequently used terms. The study comes to show that the majority of the Italian phraseological units originated in ancient Roman period. There are also numerous phraseological units devoted to the literary and Bible themes, as well as aphorisms based on the themes of cinema and theatre. In the Armenian language can also be found some phraseological units containing an art term devoted to the themes of Roman period. Phraseological units devoted to Bible themes are mostly borrowings or calks.

ОСНОВНЫЕ ПУТИ ВОЗНИКНОВЕНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ, СОДЕРЖАЮЩИХ ТЕРМИНЫ ИСКУССТВА, В ИТАЛЬЯНСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

АНАИТ МКРЯН

Преподаватель в ЕГУЛС и ЕГАХ

Ключевые слова: происхождение, этимология, фразеологическая единица, кальки, заимствования, психоллингвистика, лингвокультурные особенност. В настоящей статье, основываясь на материале фразеологических единиц, содержащих термины родства, автор исследует основные пути их происхождения в итальянском и армянском языках, их этимологию, а также проводит тематическую классификацию этих единиц, выявляя наиболее частотные темы. В результате исследования оказывается, что фразеологические единицы итальянского языка в основном возникли в романскую эпоху. Небольшое количество составляют фразеологические единицы библейской и литературной тематики, а также крылатые выражения, относящиеся к теме театра и кино. На материале армянского языка также выявлены фразеологические единицы, содержащие термины искусства, относящиеся к тематике древнероманского периода. Фразеологические единицы библейской тематики в основном заимствованы из других языков или являются кальками.

